

**ՀՀ ԽՈՇՈՐ ԵՎ ՓՈՔՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԿՅՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ  
ԽՈՐԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՆՆԵՐՈՒՄ**

**Վ. Գ. ՄԱՆԱՑԱՆ**

Աշխատանքի հասարակական բաժանումը և գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացումը օբյեկտիվ նախադրյալներ են ստեղծում միջտնտեսական կոոպերացիայի հիման վրա խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցման համար: Մասնագիտացումը՝ որպես գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման կարևոր գործոններից մեկը, հնարավորություն է տալիս իրականացնելու աշխատանքի հասարակական բաժանում ինչպես ագրարային հատվածի առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի և տարածաշրջանների, այնպես էլ խոշոր և փոքր տնտեսությունների միջև: Տարբեր չափեր ունեցող տնտեսությունների զուգակցումը ենթադրում է նրանցից յուրաքանչյուրի շրջանակներում գործող մասնագիտացված գյուղատնտեսական արտադրության առկայություն, որոնցից յուրաքանչյուրում համակենտրոնացվում է այս կամ այն ապրանքային ենթաճյուղը կամ էլ վերջնական արդյունքը թողարկող առանձին հաջորդական տեխնոլոգիական գործողությունը: Խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցումը, որ իրականացվում է աշխատանքի հասարակական բաժանման և գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման հիման վրա, դառնում է միասնական տեխնոլոգիական և կազմակերպչատնտեսական համալիր: Այդ տնտեսությունների զուգակցման շնորհիվ հնարավոր է դառնում համատեղել աշխատողների աշխատանքային գործառույթները, որոնք պայմանավորված են աշխատանքների բազմազանությամբ ու նրանց օգտագործման սեղմ ժամկետներով, և աշխատանքի արդյունքների կախվածությունը ագրոկլիմայական պայմաններից, տնտեսավարման պատմականորեն ձևավորված ավանդույթներից և այլն:

Մակայն շուկայական տնտեսավարման պայմաններում ագրարային հատվածում գործող տարբեր չափերի տնտեսություններն ունեն գործունեության տարբեր նպատակներ և մասնագիտացման տարբեր մակարդակներ: Որպես կանոն՝ խոշոր տնտեսություններին հատուկ են մասնագիտացման բարձր մակարդակը, կողմնորոշումը դեպի շուկա և շահույթի հետապնդումը: Բացի այդ, խոշոր տնտեսություններն ունեն ժամանակակից առաջավոր տեխնոլոգիան և բարձր արտադրողականության տեխնիկական առավել արդյունավետ օգտագործելու մեծ հնարավորություններ, որի շնորհիվ տեղի է ունենում արտադրանքի աշխատատարության կյւճատում, մասնագիտացման խորացում և աշխատանքի արտադրողականության բարձրացում: Արտադրանքի տվյալ տեսակի արտադրության համակենտրոնացման օպտիմալ մակարդակի հասնելու դեպքում օբյեկտիվ նախադրյալներ են ստեղծվում առանձին աշխատողների առավել խորը մասնագիտացման համար, որը նպաստում է նրանց որակավորման բարձրացմանը և աշխատանքի արդյունավետության աճին: Տնտեսավարման այս ձևում աշխատանքի բաժանման, մասնագիտացման ու կոոպերացման հիման վրա ապահովվում են աշխատուժի առավել խելամիտ օգտագործում և տարվա ընթացքում ավելի հավասարաչափ զբաղվածություն:

Ինչ վերաբերում է փոքր տնտեսություններին, ապա նրանց հիմնական նպատակը գյուղատնտեսական մթերքների ոլորտակի տեսականիով իրենց պահանջ-մուրքների բավարարումն է, և, որպես կանոն, դրանք ունեն ապրանքայնության ցածր մակարդակ: Նրանց շուկայական մուտքը, արտադրանքի իրացումը և դրամական եկամուտների ստացումը գործունեության օժանդակ, լրացուցիչ նպատակ են: Արևմուտքի երկրներում փոքր տնտեսությունների 30-ից մինչև 70%-ը դրամական եկամուտների հիմնական մասը ստանում է ոչ թե իր տնտեսությունից, այլ զբաղվածության ուրիշ ոլորտներից: Տնտեսության նշված ձևերը և նրանց սուբյեկտները չեն համարվում ագրարային հատվածի գործարարության մասնակիցներ: Պատահական չէ, որ լայն տարածում է ստացել այն տեսակետը, ըստ որի՝ «Ֆերմերությունը գործարարություն չէ, այլ ապրելակերպ»:

Գյուղատնտեսական արտադրության խոշորացումը ամենից առաջ ենթադրում է միատեսակ, միջփուլային կամ էլ միայն մեկ վերջնական արյույնքի թողարկմամբ մասնագիտացած արտադրական գործընթացների ավելացում: Այսինքն՝ տնտեսության չափերի աճը միայն այն դեպքում կհամարվի խոշորացում, երբ այն մասնագիտացված արտադրության չափերին համապատասխանող աճի հետևանք է: Եթե տնտեսության խոշորացումը տեղի է ունենում արտադրության անփոփոխ չափերի դեպքում, կամ էլ տնտեսության խոշորացման աճի տեմպերը զգալիորեն գերազանցում են արտադրանքի առանձին տեսակների թողարկման ծավալների աճին, որի արդյունքը համարվում է նրանց քանակի պարզ ավելացումը, ապա այդ դեպքում արտադրության խոշորացում տեղի չի ունենում: Դա հնարավոր է կա՛նք արտադրվող գյուղատնտեսական մթերքների տեսականու ընդլայնման, կա՛նք էլ այդպիսի կառույցներում մի շարք տնտեսությունների մեխանիկական միավորման ժամանակ, երբ արտադրության առանձին տեսակների մասնագիտացման խոշորացման գծով չեն կատարվում անհրաժեշտ տնտեսակազմակերպչական միջոցառումներ: Վերջինիս առավել բնորոշ օրինակ է համարվում ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլի՝ 1950-60-ական թվականներին ԽՍՀՄ-ում իրականացված փոքր կոլտնտեսությունների խոշորացման և դրանց սովխոզների վերակազմավորման խնդիրների մասին ագրարային քաղաքականությունը<sup>1</sup>:

Շուկայական տնտեսավարման դեպքում տնտեսությունների խոշորացման կարևորագույն պայման է համարվում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը: Արտադրության այդպիսի խոշորացումը թույլ է տալիս լավագույնս օգտագործելու խոշոր գյուղատնտեսական արտադրության առավելությունները: Ուստի գյուղատնտեսական արտադրության արդյունավետ զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունի արտադրության խոշորացման գույակցումը նրա մասնագիտացման խորացման հետ, քանզի մասնագիտացման և խոշորացման գործընթացները սերտորեն կապված են միմյանց հետ: Այդպիսի գույակցման առաջատար կողմն է մասնագիտացումը՝ իր շարժման մեջ արտացոլելով աշխատանքի հասարակական բաժանման զարգացումը և հետագա կատարելագործումը: Արտադրության խոշորացումը այդ գործընթացի կարևորագույն լրացուցիչ մասն է, որը, սակայն, չի նշանակում, թե նրան պատիվ դեր է վերապահված, քանի որ այն հանդես է գալիս որպես մասնագիտացման իրականացման ձև՝ շեշտելով գյուղատնտեսական արտադրության միատեսակությունն ու համակցվածությունը,

<sup>1</sup> Ст'я "Об укрупнении мелких колхозов и задачах партийных организаций в этом деле (30 мая 1950 г.)". В кн.: "Решения партии и правительства по хозяйственным вопросам. М., 1968, т.3, էջ 614-616:

ռիթմիկությունն ու զանգվածայնությունը և ամբողջությամբ վերցրած՝ վերջնական արդյունքը:

Շուկայական տնտեսության զարգացման արդի փուլում, երբ իրականացվում է խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցում, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հնարավոր ուղիներից է նաև միջտնտեսական կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրումը:

Տարբեր չափեր ունեցող տնտեսությունների միջև միջտնտեսական կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրման զարգացումը նպաստում են գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման հնարավորությունների առավել լրիվ օգտագործմանը և կոոպերացիայի գործընթացին մասնակցող տնտեսությունների արտադրական նոր տիպերի ձևավորմանը: Այսպես, երբ որևէ տնտեսություն կոոպերացիայի հիման վրա մասնագիտանում է միայն մեկ արտադրամիջի թողարկման առանձին արտադրատեխնոլոգիական փուլի գծով, ուրիշ տնտեսությունների կոոպերացման գործընթացի ժամանակ այս կամ այն ապրանքային ենթաճյուղն ամբողջությամբ կամ էլ մասնակիորեն դուրս է բերվում դրանից և համակենտրոնացվում է նոր ստեղծված մասնագիտացված տնտեսության մեջ, կամ կոոպերացվող տնտեսությունների խմբերից առանձնացվում են ագրարային հատվածի ճյուղերն սպասարկող օժանդակ արտադրությունների գծով մասնագիտացված միջտնտեսական ձեռնարկությունները, որոնք չեն շոշափում ձևավորված ճյուղային մասնագիտացումը և չեն հանգեցնում կոոպերացված տնտեսությունների արտադրական ուղղությունների փոփոխությանը:

Միջտնտեսական կոոպերացիայի և ագրոարդյունաբերական ինտեգրման շրջանակներում խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցումը նպաստում է գյուղատնտեսական մթերքների ու աշխատուժի արդյունավետ օգտագործմանը և տրանսպորտային ծախսերի կրճատմանը, ինչպես նաև զգալիորեն մեղմացնում է սեզոնայնության բացասական ազդեցությունը, որը հատկապես նկատելի է շուտ փչացող և ցածր փոխարյելի գյուղատնտեսական մթերքների արտադրության դեպքում (պտուղներ, հատապտուղներ, բանջարեղեն, կաթ և այլն): Բացի դրանից՝ այն մեծ հնարավորություն է տալիս խոշոր տնտեսությունների կազմում գործող վերամշակող արտադրամասերին ու գործարաններին հումքով հավասարաչափ լիաբեռներու և ֆինանսական ու աշխատանքային ռեսուրսների խուսավարելու համար:

Տարբեր չափեր ունեցող տնտեսությունների ալյուրիսի զուգակցումը, երբ լրիվ և հավասարաչափ են օգտագործվում արտադրության միջոցները, ապահովում է ավելի կայուն ֆինանսական վիճակ: Բացի դրանից՝ փոքր տնտեսությունները ստանում են մեծ քանակությամբ ոչ ստանդարտ արտադրանք (մասնավորապես այգեգործության և բանջարաբուծության մեջ այն կազմում է համախառն բերքի քառորդ մասը): Ուստի խոշոր տնտեսությունների կազմում դրանց մթերման և վերամշակման գծով արտադրամասերի և գործարանների կառուցումը թույլ է տալիս զգալիորեն բարձրացնել գյուղատնտեսական արտադրության տնտեսական արդյունավետությունը:

Վերոհիշյալը ամբողջովին վերաբերում է տարբեր չափեր ունեցող տնտեսությունների մասնագիտացման ճյուղային առանձնահատկություններին:

Ագրարային հատվածի խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցման պայմաններում, բացի վերոհիշյալից, գոյություն ունեն նաև գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման տարածքային որոշ առանձնահատկություններ: Նշումնից գլխավորն այն է, որ ինչքան միատեսակ են տվյալ տարածքի սահմաններում ձևավորված տարբեր չափեր ունեցող տնտեսությունների մասնագիտաց-

ման արտադրական ուղղությունները, այնքան մեծ են միջտնտեսական մասնագիտացման խորացման հիմքի վրա առանձին ենթաճյուղերի առանձնացման և տարածքային սպասարկող ձեռնարկությունների ու ծառայությունների հետ կոոպերացվող տնտեսությունների փոխադարձ արտադրատնտեսական կապերի հաստատման հնարավորությունները:

Իբրև կանոն՝ գյուղատնտեսական արտադրությունը տարածականորեն տարակենտրոնացված է և կազմակերպվում է ընդարձակ հողատարածքների վրա: Խոշոր և փոքր տնտեսությունների մասնագիտացման դեպքում տարածքային գործոններից տնտեսությունների տեղաբաշխման մեջ առավել էական ազդեցություն են ունենում տարածքի չափերը, տեղանքի ռելիեֆային ու դաշտերի ուրվագծային պայմանների տարբերությունները և այլն: Ըստ տարածքի չափսերի՝ տնտեսությունների տեղաբաշխումն առաջին հերթին ենթադրում է հողատարածքների ընդլայնման հաշվին արտադրվող գյուղատնտեսական մթերքների ավելացում: Մակայն, այդ ուղին, թեև բավականաչափ բնորոշ էր մեր հանրապետության ագրարային հատվածի զարգացման անցյալ փուլերի համար, այսօր փաստորեն սպառել է իր հնարավորությունները: Դրա հիմնական պատճառը մի կողմից գյուղատնտեսական արտադրության համար առավել բարենպաստ տեղադիրք և բնական պայմանների որոշակի զուգակցում պահանջող հողատարածքի անբավարարությունն է, մյուս կողմից՝ տնտեսությունների և դրանց ստորաբաժանումների չափերի չկշռադատված ավելացումը, երբ մշտապես ուղեկցվում է կառավարման դժվարություններով և տրանսպորտային ծախսերի կտրուկ աճով: Հետևաբար, մեր հանրապետության ագրարային հատվածի զարգացման արդի փուլում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման խորացման և ինտենսիվացման մակարդակի բարձրացման հիման վրա թողարկվող արտադրանքի ծավալների աճի ապահովումը ավելի նպատակահարմար է դարձել: Ընդ որում, արտադրության ինտենսիվացման աճն ու կապիտալի կուտակումը օբյեկտիվ պայմաններ են ստեղծում հողերի տնտեսական բերյիլության բարձրացման և թողարկվող արտադրանքի ծավալների ավելացման համար և հետևաբար՝ մաս խոշորացման մակարդակի բարձրացման համար:

Ինչ վերաբերում է տեղանքի ռելիեֆային պայմաններին, ապա դրանք առավել բնորոշ են լեռնային տարածաշրջաններին, որտեղ գյուղատնտեսական արտադրական գործընթացը տարակենտրոնացված է ուղղաձիգ գոտիական օրինաչափությամբ հերթափոխվող լանդշաֆտային գոտիների և տարբեր չափեր ունեցող հողատարածքների վրա:

ՀՀ-ի լեռնային տարածքում ագրոարտադրական ռեսուրսների բազմազանության շնորհիվ առկա են գյուղատնտեսական արտադրության կազմակերպման բազմազան տարբերակներ: Բայց բոլոր դեպքերում, գյուղատնտեսական արտադրության տարածքային կազմակերպման հարցերը լուծվում են գոյություն ունեցող հողատարածքների ռելիեֆային և դաշտերի ուրվագծային պայմանների առանձնահատկություններին համապատասխան՝ ստեղծելու առավել արդյունավետ արտադրական գործընթացներ, որտեղ տնտեսապես արդարացվում է գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման որևէ եղանակ: Այլ խոսքով, ՀՀ-ի յուրաքանչյուր ուղղաձիգ լանդշաֆտային գոտու բնատարածքային տեղամասերում կարելի է կազմակերպել տարբեր չափեր ունեցող տնտեսություններ՝ որոշակի մասնագիտացման արտադրական ուղղությամբ և ինտենսիվացման մակարդակով, որոնք միայն տվյալ տեղանքի ռելիեֆային պայմաններում են գտնում իրենց «տարածքային բացվածությունը»:

Վ. Կրյուչկովը այդ մասին գրել է. «Տարածքի լանդշաֆտային առանձնահատկությունները, հանդես գալով որպես գյուղատնտեսության կազմակերպման տեղական պայմաններ, ուաշակի ազդեցություն են թողնում հողատեսքերի չափերի ու ուրվագծերի, վարելահողերի, խոտհարքերի ու արտավայրերի փոխադարձաբար տեղաբաշխման և հարաբերակցության, մեքենայական այս կամ այն համակարգի, ագրոտեխնիկայի կիրառման հնարավորությունների և հողակտորների ոչ միատեսակ տրանսպորտային մատչելիության վրա»<sup>2</sup>:

ՀՀ-ի լեռնային տարածաշրջանների համար բնորոշ է գյուղատնտեսական հողատեսքերի մանրատրվագիծ և անկանոն կառուցվածքը, որոնց տարածման շրջանները բնութագրվում են բնական լանդշաֆտների խիստ բազմազանությամբ և գյուղատնտեսական արտադրության կազմակերպման յուրօրինակ պայմաններով: Այսպես, ըստ չափերի ՀՀ-ի գյուղատնտեսական հողատեսքերի խմբավորման տվյալների վերլուծությունից պարզվում է, որ մանրատրվագիծ և անկանոն կառուցվածք ունեցող հողակտորները (մինչև 1 հա) կազմել են հանրապետության ամբողջ վարելահողերի 18.1%, բազմամյա տնկարկները՝ 12.2% և խոտհարքները՝ 21% (տես աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**ՀՀ-ի գյուղատնտեսական հողատեսքերի խմբավորումն ըստ նրանց չափերի<sup>3</sup>**

| ՀՀ-ի գյուղատնտեսական հողատեսքերի խմբավորումը ըստ չափերի, հա-ով | Վարելահողեր |      | Բազմամյա տնկարկներ |      | Խոտհարքներ |      |
|--|-------------|------|--------------------|------|------------|------|
|  | հազ.հա      | %-ով | հազ.հա             | %-ով | հազ.հա     | %-ով |
| մինչև 1.0  | 84          | 18.1 | 9                  | 12.2 | 27         | 21.0 |
| 1.1-3.0  | 143         | 31.0 | 19                 | 25.7 | 40         | 31.0 |
| 3.1-5.0  | 146         | 31.6 | 22                 | 29.7 | 26         | 20.1 |
| 5.1-10.0   | 38          | 8.2  | 10                 | 13.5 | 20         | 15.5 |
| 10.1-15.0  | 23          | 5.0  | 3                  | 12.2 | 13         | 10.1 |
| 15.1-20.0  | 18          | 3.9  | 3                  | 4.0  | 2          | 1.5  |
| 20.1-ից ավելի  | 10          | 2.2  | 2                  | 2.7  | 1          | 0.8  |
| Ընդամենը   | 462         | 100  | 74                 | 100  | 129        | 100  |

Դրանք բավականին մեծ տեսակարար կշիռ են կազմում Վայոց Ձորի, Լոռվա և Արագածոտնի մարզերում: Այսպես, օրինակ, Եղեգնաձորի տարածաշրջանում ըստ չափերի գյուղատնտեսական հողատեսքերի խմբավորման տվյալների վերլուծությունից պարզվում է, որ 0.3-1 հա հողակտորները կազմում են ունեցած ամբողջ գյուղատնտեսական հողատեսքերի 47.3%-ը, իսկ Վայքում՝ 41.4%<sup>4</sup>: Մասնավորապես,

<sup>2</sup> В. Крючков, Проблемы и методы системного экономико-географического исследования для прогнозирования эффективной территориальной организации сельского хозяйства. Автореф. дис. д-ра геогр. наук. М., 1978, с.13.

<sup>3</sup> Աղյուսակը կազմել ենք Հայշինմոնիտորինգ պետական ոչ առևտրական կազմակերպության հողային կադաստրի բաժնի տվյալների հիման վրա:

<sup>4</sup> Տես նույն ծառայության տվյալները:

մանրատրվագիծ և անկանոն կառուցվածք ունեցող հողակտորների չափերը սովորաբար այնքան փոքր են, որ, փաստորեն, հնարավոր չէ օգտագործել խոշոր տրնտեսություններում, և, հետևաբար, շուկայական տնտեսավայրման պայմաններում տնտեսապես արդարացված է դրանց հողօգտագործման փոքր տնտեսություններին հատկացնելու եղանակը: Ագրարային հատվածի զարգացման արդյի փուլում խոշոր և փոքր տնտեսությունների միջև հողօգտագործման ալոպաթի համակարգը հնարավորություն է տալիս ճիշտ լուծելու ագրարտադրական նպատակներով հողատարածքն օգտագործելու հիմնական խնդիրը, այսինքն՝ տարբեր չափեր և ուրվագիծ ունեցող գյուղատնտեսական հողատեսքերը համամասնորեն բաշխելու խոշոր և փոքր տնտեսությունների միջև և արդյունավետ կազմակերպելու ագրարտադրական նպատակներով նրանց օգտագործումը: Հետևաբար, լեռնային տարածաշրջանների հողակտորների չափերի խիստ տարբերությունները, կազմելով գյուղատնտեսական հողատեսքերի զգալի մասը, ոչ միայն չեն խոչընդոտում խոշոր և փոքր տնտեսությունների միջև հողօգտագործման ճիշտ կազմակերպումը, այլև ընդհակառակը, նպաստում են գյուղատնտեսական արտադրության միջտնտեսական մասնագիտացման խորացմանը և ներճյուղային կառուցվածքի կատարելագործմանը: Այսպես, օրինակ, բանջարանոցային մշակաբույսերից՝ մանր կանաչիների տարբեր տեսակների, հատիկալընդեղեններից՝ լոբազգիների, հատապտուղների, խաղողի՝ սեղանի ու չորացվող սորտերի աճեցումը, անասնաբուծության ենթաճյուղերից՝ ջրլող ու մանր թռչունների բազմացումը, մեղվաբուծությունը և ճագարաբուծությունը տնտեսապես ավելի նպատակահարմար է կենտրոնացնել փոքր տնտեսություններում: Վերոհիշյալ ենթաճյուղերն ու արտադրություններն ունեն ոչ միայն տարածման սահմանափակ արեալ, այլև աշխատանքների դժվար մեքենայացման և ձեռքի աշխատանքի գերակշռության պայմաններում արտադրության համակենտրոնացման սահմանափակ հնարավորություններ: Բացի դրանից, մի շարք աշխատատար մշակաբույսերի նկատմամբ լուրջ ուշադրության և գյուղատնտեսական կենդանիների հանդեպ հոգատար վերաբերմունքի շնորհիվ փոքր տնտեսություններում ապահովվում է ավելի բարձր արդյունավետություն: Այսպես, ուսումնասիրությունները Էջմիածնի տարածաշրջանի առանձին գյուղական համայնքների (Գ-այ, Տարոնիկ, Բաղրամյան) ընտրովի տնտեսություններում ցույց տվեցին, որ բանջարանոցային մշակաբույսերի աճեցման համար հատկացված միավոր ցանքատարածության հաշվով փոքր (գյուղացիական) տնտեսությունները 2-2.5 անգամ ավելի շատ բերք են ստանում, քան խոշոր տնտեսությունները:

Բացի դրանից, արդյունավետ օգտագործելով ցածրադիր գոտու ագրոկլիմայական պայմանները և հասունացման տարբեր ժամկետներ ունեցող գյուղատնտեսական մշակաբույսերի ու սորտերի զուգակցումը (օրինակ՝ վաղահաս, միջահաս և ուշահաս բանջարանոցային մշակաբույսերի օգտագործումը)՝ հնարավորություն է ընձեռնվում դրանց ցանքի կամ սածիլման և բերքահավաքի ընթացքում ավելի հավասարաչափ օգտագործելու աշխատուժը և վեգետացիոն փուլի ընթացքում ստանալու երկու-երեք բերք:

Եվ եթե խոշոր տնտեսությունները, ապահովելով ապրանքայնության բարձր մակարդակ, իրենց վրա են վերցնում պետությանը, կոոպերատիվներին և ուրիշ սպառողներին հիմնական գյուղատնտեսական մթերքներով, իսկ վերամշակող արդյունաբերությանը գյուղատնտեսական հումքով բավարարելու խնդիրը, ապա փոքր տնտեսությունները, մի տեսակ մրցակցային դեր կատարելով, իրենց վրա են վերցնում բնակչությանը գյուղատնտեսական մթերքների լայն տեսականիով ապա-

հովելու և շուկայում իրացման միջոցով երկրի պարենային ֆոնդի ձևավորմանը մասնակցելու պարտականությունները: Հենց այդ պատճառով էլ ՀՀ-ի ցածրադիր և նախալեռնային գոտիների փոքր տնտեսությունների բուսաբուծության ներճյուղային կառուցվածքից աստիճանաբար դուրս են մղվում գյուղատնտեսական այն մշակաբույսերը, որոնց աճեցմամբ մասնագիտանում են խոշոր տնտեսությունները (խաղողի տեխնիկական սորտեր, խոշոր կորիզավոր պտուղներ, ջերմասեր բանջարանոցային, հացահատիկային մշակաբույսեր և այլն), փոխարենը ավելի շատ աճեցնում են տարածման սահմանափակ արեալ և սպառողական մեծ պահանջարկ ունեցող մշակաբույսեր (մանր կանաչիներ, հատապտուղներ, խաղողի՝ սեղանի և չորացվող սորտեր և այլն): Վերոհիշյալի լավագույն օրինակ է Արմավիրի մարզում արգենտինահայ գործարար Է. Էռնեկյանի կողմից ստեղծվող խոշոր տրնտեսությունը՝ ագրոհոլդինգը, որը մասնագիտանալու է գինեգործության և կոնյակի արտադրության համար հումք ծառայող խաղողի տեխնիկական սորտերի արտադրության գծով: Մինչդեռ գյուղացիական փոքր տնտեսությունները, ունենալով առավելապես սպառողական բնույթ, խաղողի սորտերի մեջ նախապատվելի են համարում առավելապես տարբեր ժամկետներում հասունացող սեղանի և չորացվող սորտերի արտադրությունը: Կարծում ենք, առաջիկայում խոշոր և փոքր տնտեսությունների միջև խաղողագործության գծով ներճյուղային մասնագիտացման խորացման և միջտնտեսական կոոպերացիայի զարգացման այդ միտումը պետք է պահպանվի և կատարելագործվի, քանի որ հասունացման տարբեր ժամկետներ ունեցող սեղանի և չորացվող տեսակների արտադրության գծով մասնագիտացման խորացումը որոշելու է փոքր տնտեսությունների դերը խաղողագործության աշխատանքի ներճյուղային բաժանման համակարգում:

ՀՀ-ի լեռնային գոտու՝ բուսաբուծության ներճյուղային կառուցվածքում ևս խոշոր և փոքր տնտեսությունների միջև (և ամենից առաջ՝ հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսեր) կարող է իրագործվել աշխատանքի առանձնահատուկ բաժանում: Այս ենթաճյուղում աշխատանքի բաժանման կատարելագործման և ներճյուղային մասնագիտացման խորացման արդյունքը համարվելու է այն, որ խոշոր տնտեսությունների մասնագիտացման խորացումը առաջիկայում կողմնորոշվելու է աճեցման համեմատաբար քիչ աշխատանքային ծախսեր պահանջող, աշխատանքային գործընթացներն ամբողջությամբ մեքենայացված հիմնական հացահատիկային մշակաբույսերի (ցորեն, գարի, եգիպտացորեն և տարեկան) արտադրության վրա: Մինչդեռ ձեռքի աշխատանքի բարձր տեսակարար կշռի և աշխատատարության պատճառով փոքր տնտեսությունները մասնագիտանալու են տարածման սահմանափակ արեալ ունեցող հատիկալընդեղենային մշակաբույսերի (հաճար, լոբի, ոսպ և կորեկ) արտադրության գծով: Ուստի հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերի արտադրությունն ավելացնելու, դրանց որակը բարելավելու և հացի, հացաբուլկեղենի, մակալունեղենի ու ձավարեղենի նկատմամբ բնակչության շուկայական պահանջարկը առավել լրիվ բավարարելու գործում տնտեսապես արդարացվում է խոշոր և փոքր տնտեսությունների միջև այդ մշակաբույսերի աճեցման գծով աշխատանքի ներճյուղային առանձնահատուկ բաժանումը և հետագա կատարելագործումը:

Նույնը կարելի է ասել նաև անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում աշխատանքի բաժանման և հետագա մասնագիտացման խորացման մասին: Այսպես, կաթնատու տավարաբուծությամբ մասնագիտացված Երևանի մերձքաղաքային գոտու խոշոր տնտեսություններում առավելապես մսուրային պահվածքի և կերային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հաշվին միավոր հողատարած-

քի հաշվով ապահովվում է ավելի բարձր մթերատվություն: Հետևաբար, տնտեսապես ավելի նպատակահարմար է խոշոր տնտեսությունների հաշվին բնակչությանն ապահովել թարմ կաթով և կաթնամթերքով, քան թե կերաղքատ գոտու փոքր տնտեսություններում լրացուցիչ ծախսեր կատարել տավարաբուծության այդ արտադրական ուղղությունը զարգացնելու համար:

Կարծում ենք, ցածրադիր գոտու փոքր տնտեսություններում կթու կովերի գլխաքանակի կրճատման հաշվին տնտեսապես նպատակահարմար է ավելացնել անասնաբուծության այլ ենթաճյուղերի տեսակալար կշիռը (մասնավորապես՝ առանձին տնտեսություններ, ելնելով ագրոկլիմայական պայմանների ընձեռած հնարավորություններից և տնտեսավարման ավանդույթներից, կարող են մասնագիտանալ թռչնի մսի ու ձվի, մյուսները՝ խոզի մսի, երրորդը՝ ճագարի մսի, իսկ որոշ տնտեսություններ՝ նաև մեղրի արտադրության գծով):


ՀՀ-ի լեռնային գոտում լանդշաֆտների բազմազանության և գոտիական հերթափոխության օրինաչափության շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրին համապատասխանում է գյուղատնտեսական արտադրության կազմակերպման որոշակի տիպ, ձևավորվում են մասնագիտացման տարբեր արտադրական ուղղություններ ունեցող տնտեսություններ: Այս գոտու տարբեր շափեր ունեցող տնտեսությունները մասնագիտացել են առավելապես անասնաբուծական մթերքների արտադրության գծով և բնութագրվում են տնտեսության միատիպությամբ: Ծնորիվ լեռնային լանդշաֆտների տարբեր տիպերի առկայության (ցածրադիր ենթագոտու լեռնատափաստանայինից մինչև բարձրադիր՝ լեռնամարգագետնայինը)՝ ձևավորվում են մասնագիտացման լեռնասանասնաբուծական տիպերը: Մասնավորապես, ցածրադիր լեռնատափաստանային ենթագոտու խոշոր տնտեսություններում գերիշխում է կաթնամսատու տավարաբուծությունը, իսկ փոքր տնտեսություններում՝ վերջինս զուգակցվում է թռչնաբուծության և խոզաբուծության հետ: Բարձրադիր լեռնամարգագետնային ենթագոտու խոշոր տնտեսություններում տավարաբուծության հետ հավասարաչափ կարևոր նշանակություն ունի նաև ոչխարաբուծությունը:

Անցումը ավելի նոսր բնակեցված բարձրադիր տեղամասերին խոշոր տնտեսություններում ուղեկցվում է ոչխարաբուծության տեսակալար կշռի ավելացմամբ, իսկ կերային ռեսուրսներով ապահովված առանձին տեղամասերում անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունի մսակաթնատու տավարաբուծությունը: Երկրագործության թույլ յուրացված լեռնային դժվարամատչելի տեղամասերում փոքր տնտեսությունների արտադրական ուղղության ձևավորման հիմքը ոչխարաբուծությունն է, մասամբ էլ՝ այծաբուծությունը՝ զուգակցված մեղվաբուծության և ձիաբուծության հետ:

Կանխատեսվող հեռանկարում հանրապետության անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում (հատկապես նրա առավել աշխատատար ենթաճյուղում՝ կաթնատու տավարաբուծության մեջ) առկա փորձի հիման վրա կարելի է ենթադրել, որ խոշոր և փոքր տնտեսությունների միջև կարող է իրականացվել աշխատանքի առանձնահատուկ բաժանում (տե՛ս գծապատկեր 1):

Բերված գծապատկերից երևում է, որ խոշոր տնտեսության կողմից աջակցությունը կարող է ավելի քիչ լինել, քան դա ցույց է տրված առաջին տարբերակով: Այդ դեպքում փոքր տնտեսության սեփականատերն առանց օժանդակության չի կարող պահել խոշոր եղջերավոր անասուններ: Ընդհակառակը, երրորդ տարբերակը ցույց է տալիս կոոպերացիայի ամենաբարձր մակարդակը, որում փոքր տնտեսությունը տրամադրում է միայն անասնաշենք և աշխատուժ:

ՀՀ կաթնատու տավարաբուծության մեջ հեռանկարում խոշոր և փոքր տնտեսությունների միջև աշխատանքի բաժանման հնարավոր ձևերը



Այդ դեպքում փոքր տնտեսություններում հիմնական աշխատանքային գործընթացները (կիթը, մատղաչների մեծացումը, գոմադրի հեռացումը, երբեմն էլ մակ կերակրումը) ըստ էության կարող է մեքենայացվել խոշոր տնտեսությունների ման: Դա, քնականաբար, ենթադրում է հատուկ մեքենաներով և սարքավորումն-

րով ապահովում: Աշխատանքի այսպիսի բաժանման դեպքում կարելի է ենթադրել, որ անասնապահը սեփական անասնաշենքում կատարում է այդ նույն աշխատանքը, սակայն անհամեմատ ավելի քիչ ծախսերով, քան եթե նա աշխատելիս լիներ խոշոր տնտեսության մեջ:

Գծապատկերում բերված 3 տարբերակների դեպքում խոշոր և փոքր տնտեսությունների միջև կաթնատու տավարաբուծության գծով աշխատանքի բաժանման հիման վրա կարելի է ստեղծել օրգանական կապ: Միաժամանակ, այդ տարբերակները թույլ են տալիս տնտեսավարման այդ երկու ձևերի միջև իրականացնել նոր, ավելի բազմազան, ռացիոնալ և տնտեսապես շահավետ աշխատանքի բաժանում:

ՀՀ կաթնատու տավարաբուծության ենթաճյուղում խոշոր և փոքր տնտեսությունների միջև աշխատանքի բաժանման վերոհիշյալ ձևերի արմատավորման գործընթացը, ցավոք, գտնվում է միայն ձևավորման փուլում: Այդ տեսակետից ամիրածեշտ են զգալի փոփոխություններ, որոնք առաջին հերթին կապված են փոքր տնտեսություններում գյուղատնտեսական արտադրության արդիականացման հետ:

Աշխատանքի միջտնտեսական բաժանումը և մասնագիտացման խորացումը հնարավորություն են տալիս խոշոր և փոքր տնտեսությունների զուգակցման հիման վրա իրականացնել նաև գյուղատնտեսական արտադրության միջփուլային մասնագիտացում և կոուպերացում: Տարբեր չափեր ունեցող տնտեսությունների միջև միջփուլային արտադրական մասնագիտացման առավելությունը պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսական մշակաբույսերի աճի ու կենդանիների բազմացման կենսաբանական առանձնահատկությունների և արտադրատեխնոլոգիական փուլերին համապատասխան վերջնական արդյունքի ստացման գործընթացում օգտագործվում են արտադրության արդյունավետության բարձրացման բնատնտեսական պայմանների ընձեռած հնարավորությունները:

Խոշոր և փոքր տնտեսությունների միջև փուլային մասնագիտացման խորացումը հիմնվում է միասնական արտադրատեխնոլոգիական գործընթացի մասնատման վրա, երբ փոքր տնտեսությունները մասնագիտանում են առավելապես ձեռքի աշխատանք պահանջող տեխնոլոգիական գործողությունների գծով, իսկ խոշորները՝ մեքենայացման բարձր մակարդակ ունեցող գործողություններում: Մասնագիտացման խորացման այս տեսակը մեծապես կախված է գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման մակարդակից և ներճյուղային կառուցվածքի առանձնահատկություններից: Ուստի, ագրարային հատվածի միայն որոշ ենթաճյուղերում արտադրությունը կարող է մասնատվել, դառնալ ինքնուրույն և կենտրոնացվել փուլային մասնագիտացված տնտեսություններում և ստորաբաժանումներում: Դրանք թոչնաֆաբրիկաները, խոզի մսի և տավարի՝ մատղաշի բտման գծով տնտեսություններն են և այլն: Այսպես, օրինակ, խոզի մսի արտադրության մեջ խոշոր և փոքր տնտեսությունների միջև կարող է իրագործվել վերջնական արդյունքի արտադրության ամբողջ շղթայի առանձին տեխնոլոգիական փուլերի գծով աշխատանքի միջտնտեսական բաժանում: Մասնավորապես, վերարտադրության (բազմացման) ու մատղաշների աճեցման փուլերն ավելի շատ համապատասխանում են փոքր տնտեսությունների շահերին, իսկ ինտենսիվ բտման և ոլորակի քաշային պահանջվող որակի հասցնելու փուլերը՝ խոշոր տնտեսություններին:

Միջփուլային մասնագիտացման շնորհիվ հնարավոր է դառնում առավել արդյունավետ օգտագործել տնտեսության և նրա ստորաբաժանումների ագրուկլիմայական և սոցիալ-տնտեսական պայմանների ընձեռած հնարավորությունները: Բացի դրանից, վերջնական արտադրանք թողարկող միջփուլային մասնագիտաց-

ված խաշոր և փոքր տնտեսությունները հանդես են գալիս միմյանց հետ սերտ արտադրատեխնոլոգիական կապերով, արտադրությունը կազմակերպելով անընդհատության և զանգվածայնության սկզբունքով:

Կարծում ենք, միջփուլային մասնագիտացումը, որ այժմ տարածում է գտել միայն անասնաբուծության առանձին ենթաճյուղերում, տնտեսապես նպատակահարմար է զարգացնել նաև բուսաբուծության մեջ (և ամենից առաջ՝ այգեգործության, ջերմոցային տնտեսության և այլ ենթաճյուղերում):

Խաշոր և փոքր տնտեսությունների զուգակցման օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ այդ տնտեսությունների միջև աշխատանքի բաժանման խորացումը նպաստում է խաշորամասշտաբ և մասնագիտացված արտադրությունների զարգացմանը: Արտադրությունը խաշոր տնտեսությունում կարելի է մասնագիտացնել միայն այն ժամանակ (իսկ դա արտադրության այսուհետև արժանապատեհության կարևորագույն գործոններից մեկն է), երբ որոշակիորեն սահմանափակվում է ենթաճյուղերի քանակը՝ այն հասցնելով նվազագույնի: Միաժամանակ, ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ տարածաշրջանների և տեղական մասշտաբներով պահպանվում են բնակչության պահանջարկը գյուղատնտեսական մթերքների լայն տեսականու նկատմամբ (հատկապես ցածր մեքենայացված և ձեռքի աշխատանք պահանջող ենթաճյուղերում): Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման ներկա փուլում դրանց արտադրությունը համարվում է փոքր տնտեսությունների հիմնական գործառույթներից մեկը: Այդ հրատապ խնդրի լուծումը թույլատրելու է կատարելագործել խաշոր և փոքր տնտեսությունների ինչպես ճյուղային, այնպես էլ տարածքային մասնագիտացումը՝ միաժամանակ ապահովելով դրանց զարգացման բարձր տեմպեր:

**В. Г. МАНАСЯН — Сочетание крупных и мелких хозяйств РА в условиях углубления специализации сельскохозяйственного производства.** — В статье подчеркивается, что сочетание крупного хозяйства с мелкими способствует углублению разделения труда между этими хозяйствами и развитию крупномасштабного и специализированного сельскохозяйственного производства. Узкая специализация в крупных хозяйствах (а это одно из главных условий повышения эффективности производства) возможна только при существенном ограничении отраслей (некоторые производственные типы крупных хозяйств являются одноотраслевыми). А в результате разделения труда и кооперации в этих хозяйствах обеспечивается эффективное производство сельскохозяйственного сырья, которое перерабатывается на промышленных предприятиях. В то же время сохраняется потребность в широком ассортименте различных сельскохозяйственных продуктов, как в масштабе всей республики, так и на региональных и местных уровнях. Их пополнение, по мнению автора, является одной из основных функций мелких хозяйств в условиях рыночной экономики. Решение этой актуальной задачи позволит совершенствовать разделение труда и специализацию крупных и мелких хозяйств, обеспечивая высокие темпы их развития. Исходя из территориальных особенностей республики Армения, как горной страны, в статье характеризуются возможности специализации мелких хозяйств и их сочетание с крупным производством по высотным ландшафтным поясам.